

N_24/01, 29 հունվարի 2019թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պն Անդրեյ Ղուկասյանին

Հարգելի պ-ն Ղուկասյան

Կայուն զարգացման նախաձեռնությունների «Աստղացույք» հասարակական կազմակերպությունը, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով ազգային պլատֆորմի հետ համագործակցությամբ, «ՀԻՄԱ՝ հանրային միջոցները՝ հանուն երեխաների իրավունքների պաշտպանության» ծրագրի շրջանակներում իրականացնում է Տավուշի, Գեղարքունիքի և Լոռու մարզերի մարզպետարանների բյուջեների մոնիթորինգ: Միաժամանակ իրականացվելու են նաև 6 քաղաքային համայնքների բյուջեների և կատարողական հաշվետվությունների ուսումնասիրություն: Ծրագիրն իրականացվում է ԵՄ համաֆինանսավորմամբ:

Խնդրում եմ Ձեզ, պատասխան նամակով տրամադրել ամփոփ տեղեկատվություն, 2017-2018 թվականին մարզպետարանի կողմից հասարակական կազմակերպություններին տրամադրված ֆինանսական հատկացումների վերաբերյալ (կազմակերպություն, ֆինանսական հատկացման չափ, ծրագրի անվանում):

Կանխավ շնորհակալ եմ:

Հարգանքով՝

Կայուն զարգացման նախաձեռնությունների
«Աստղացույք» ՀԿ նախագահ

Ի.Հովհաննիսյան

